01.06.2018թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Այսօր հունիսի 1-ն է. ամռան առաջին օրը մեկնարկում է Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրով, որը վերածվել է մանկան տոնի:

Սիրելի երեխաներ

Ձեր իրավունքների պաշտպանության օրը ևս մեկ ազդակ է, որ մեծահասակներն ունեն կարևոր առաքելություն՝ պաշտպանել ձեր իրավունքներն ու լավագույն շահերը, ձեր մանկությունը դարձնել ապահով և անվտանգ:

Հարգելի ծնողներ, մեծահասակներ

Երեխաների երջանիկ մանկության, իրավունքների գերակայության համար պատասխանատու ենք բոլորս, և յուրաքանչյուրն իր տեղում, իր հնարավորությունների և լիազորությունների սահմաններում պետք է անի հնարավորը՝ ստեղծելու ներդաշնակ ու լիարժեք պայմաններ:

Տեղական իշխանությունն էլ անում է հնարավորը, որպեսզի մեր համայնքի փոքրիկները կարողանան օգտվել նախադպրոցական ուսումնական և արտադպրոցական հաստատությունների ծառայություններից, որպեսզի իրացվի նրանց կրթության, ժամանցի կազմակերպման, հմտություններ և կարողություններ ձեռքբերելու իրավունքը:

Չմոռանանք, որ հունիսի 1-ը ոչ միայն ժպիտների, շնորհավորանքների օր է, այլ նաև պատասխանատվության, հոգատարության դրսևորման առանձնահատուկ օր, որը ևս մեկ անգամ հիշեցնում է մեծահասակներիս երեխաների հանդեպ ունեցած պարտականությունների մասին: Պաշտպանելով մեր երեխաների իրավունքները՝ մենք պաշտպանում ենք բոլորիս ապագան:

Բազմաթիվ ցանկությունների շղթայում առաջնայինն այն է, որ յուրաքանչյուր երեխա ապրի ու մեծանա ընտանիքում, դաստիարակվի ջերմ և փոխադարձ ըմբռնման մթնոլորտում, հնարավորություն ունենա իր փոքրիկ աշխարհը դարձնել լուսավոր ու պայծառ՝ շրջապատված ուշադրությամբ և հոգատարությամբ:

Սիրելի երեխաներ,

Մեկնարկում են նաև ամառային արձակուրդները, մաղթում եմ ձեզ հիշարժան և անմոռանալի հանգստյան օրեր, դրական լիցքեր:

Իմ փոքրիկ բարեկամներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու կողմից շնորհավորում եմ ձեզ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ: Թող մանկության ձեր մոլորակում շուրջտարին արև լինի ու ջերմություն, եղեք շրջապատված ձեր ծնողների ու հարազատների սիրով, դարձեք նրանց հպարտությունը, վայելեք առողջ, խաղաղ ու անհոգ մանկություն՝ ձեր ընտանիքներին ու շրջապատին պարգևելով անսպառ երջանկություն, ձեզանով իրենց կյանքն իմաստավորելու անսահման բերկրանք:

Իսկ մենք՝ մեծահասակներս, անելու ենք հնարավորը, որպեսզի դուք լինեք պաշտպանված, հոգատարությամբ շրջապատված, ապրեք խաղաղ երկնքի տակ: